



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 2
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Քննաթերթ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1	15 միավոր
Խնդիր 2	18 միավոր
Խնդիր 3	9 միավոր
Խնդիր 4	8 միավոր
Ըդամենը	100 միավոր

Հուլիս 2026թ.

Հարցեր 1-25. Բազմակի ընտրության հարցեր: Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է:

1. Ֆինանսահիշյալ պնդումները վերաբերում են ֆինանսական հաշվառմանը, ծախսերի (ինքնարժեքի) և/կամ կառավարչական հաշվառմանը.

(i) Ֆինանսական հաշվառման տվյալները պատմական գրառումներ են (արտացոլում են անցյալի իրադարձությունները):

(ii) Ինքնարժեքի հաշվառումը ֆինանսական հաշվառման մի մասն է և որոշում է կազմակերպության թողարկված արտադրանքի միավորի ինքնարժեքը:

(iii) Կառավարչական հաշվառումն օգտագործվում է պլանավորմանը, վերահսկողությանը և որոշումների կայացմանն աջակցելու համար:

Ո՞ր պնդումներն են ճիշտ:

Ա) միայն (i) և (ii)

Բ) միայն (i) և (iii)

Գ) միայն (ii) և (iii)

Դ) (i), (ii) և (iii)

2. Ստորև թվարկվածներից որո՞նք են հանդիսանում սենսորային/մեքենայական տվյալների (sensor/machine data) օրինակներ.

(i) բջջային հեռախոսից ստացվող տեղորոշման տվյալները (location data)

(ii) սառցարանում տեղադրված ջերմաչափերից ստացվող ջերմաստիճանային տվյալները

(iii) գովազդի վերաբերյալ սոցիալական մեդիայից (ցանցերից) ստացվող տեղեկատվությունը

Ա) (ii) և (iii)

Բ) (i) և (iii)

Գ) (i) և (ii)

Դ) միայն (ii)

3. Ստորև թվարկվածներից որո՞նք կարող են ներառվել պաշարների գնահատման (ինքնարժեքի որոշման) մեջ.

(i) ուղղակի նյութական ծախսեր (direct material)

(ii) աշխատուժի ուղղակի ծախսեր (direct labour)

(iii) վարչական ծախսեր (administration costs)

(iv) արտադրական վերադիր ծախսեր (production overheads)

Ա) (i), (ii) և (iii)

Բ) (i), (ii) և (iv)

Գ) (ii), (iii) և (iv)

Դ) (i), (iii) և (iv)

4. Կազմակերպությունն արտադրում և վաճառում է խաղալիքներ և կրում է հետևյալ երեք տեսակի ծախսերը.

(i) Պատրաստի արտադրանքի պահեստի վարձակալություն

(ii) Սեփական առաքման մեքենաների հավաքակազմի (ավտոպարկի) մաշվածություն

(iii) Վաճառքի անձնակազմին վճարվող միջնորդավճարներ (կոմիսիոն վճարներ)

Սրանցից որո՞նք են դասակարգվում որպես բաշխման ծախսեր (distribution costs).

Ա) միայն (i) և (ii)

Բ) միայն (ii) և (iii)

Գ) միայն (ii)

Դ) (i) և (iii)

5. Կազմակերպության շաբաթական արտադրության ծախսումները (C- հազ դրամ) գրաֆիկորեն արտացոլվել են արտադրության ծավալների (V-միավոր) համեմատ վերջին 40 շաբաթների համար, և հաշվարկվել է ռեգրեսիոն գիծ հետևյալ բանաձևով՝ $C = 800 + 200V$ հազ. դրամ: Շաբաթական ծախսումների վերլուծության վերաբերյալ ստորև թվարկված պնդումներից ո՞րն է ճիշտ.

Ա) Շաբաթական հաստատուն ծախսումները 800 հազ. դրամ են, փոփոխուն ծախսումները մեկ միավորի հաշվով՝ 5 հազ. դրամ

Բ) Շաբաթական հաստատուն ծախսումները 200 հազ դրամ են, փոփոխուն ծախսումները մեկ միավորի հաշվով՝ 800 հազ. դրամ

Գ) Շաբաթական հաստատուն ծախսումները 800 հազ. դրամ են, փոփոխուն ծախսումները մեկ միավորի հաշվով՝ 200 հազ դրամ

Դ) Շաբաթական հաստատուն ծախսումները 20 հազ. դրամ են, փոփոխուն ծախսումները մեկ միավորի հաշվով՝ 5 հազ. դրամ

6. Ռեստորանի ֆինանսական ղեկավարը ցանկանում է մշակել ինդեքսային թվերի շարք՝ սննդամթերքի գների փոփոխությունները չափելու համար: Հաշվի առնելով հիմնական վաճառվող միավորները, ընտրվել է չորս ապրանքատեսակ, որոնք ամփոփված են ստորև.

	միավորի գին (դրամ)		վաճառված միավորներ	
	20X4	20X5	20X4	20X5
Հաց (կգ)	400	450	2,000	2,400
Խմորեղեն (հատ)	900	1,200	3,000	4,000
Հյութ(լիտր)	600	700	10,000	10,000
Միս (կգ)	4,000	5,000	4,000	5,000

Հաշվարկեք 20X5-ի կշռված քանակային ինդեքսը այս չորս ապրանքների համար (20X4-ը որպես բազային տարի)՝ օգտագործելով 20X4-ի վաճառքի եկամուտը որպես կշիռներ:

Ա) 1,198

Բ) 1,235

Գ) 1,031

Դ) 0,970

7. Մեծ տվյալներին(Big data) վերաբերող հետևյալ պնդումներից որն է ճիշտ:

Ա) Մեծ տվյալները(Big data) վերաբերում են 10 միլիոն հատ գործառնություններից ավելի ցանկացած ֆինանսական տվյալի:

Բ) Մեծ տվյալները(Big data) բնութագրվում են՝ արագությունը, ծավալը, միատեսակ լինելը, արժանահավատությունը և արժեքը:

Գ) Մեծ տվյալների(Big data) արդյունավետ կառավարումը կարող է հանգեցնել մրցակցային առավելության աճի:

Դ) Մեծ տվյալները(Big data) պարունակում են միայն ոչ ֆինանսական տվյալներ:

8. Նոր ապրանքի վաճառքի կանխատեսումները առաջացնում են ակնկալվող շահույթի/վնասի հետևյալ հավանականությունը.

Պահանջարկի մակարդակ	Շահույթ/վնաս մլն.դրամ	հավանականություն
Շատ բարձր	500	5%
Բարձր	200	10%
Միջին	100	60%
Ցածր	(200)	25%

Որքա՞ն է նոր ապրանքից սպասվող շահույթի կամ վնասի մեծությունը:

Ա) 600 մլն. դրամ

Բ) 100 մլն. դրամ

Գ) 55 մլն. դրամ

Դ) 150 մլն. դրամ

9. Արտադրական ընկերությունը տարվա ընթացքում հավասարաչափ օգտագործում է 26,000 հատ բաղադրիչ: Այդ բաղադրիչները մատակարարին պատվիրվում են 1,200-ով քանի որ դա պատվերի օպտիմալ քանակն է: Ընկերությունը նաև պահում է 700 հատ բաղադրիչ որպես բուֆերային պաշար: Մեկ բաղադրիչը պահեստում պահելու տարեկան ծախսը կազմում է 500 դրամ:

Որքա՞ն դրամ է կազմում տվյալ բաղադրիչի պաշարի պահպանման տարեկան ընդհանուր ծախսը

Ա) 950,000

Բ) 350,000

Գ) 300,000

Դ) 650,000

10. Գրասենյակային կահույք վաճառող խոշոր խանութը հաջող վաճառվող բազմոցի մի մոդելի ապրանքային մնացորդի վերաբերյալ ունի հետևյալ տվյալները.

Տարեկան պահանջարկ՝ 3000 բազմոց

Առավելագույն մնացորդ՝ 210 բազմոց

Նվազագույն պաշար՝ 30 բազմոց

Պատվերի կատարման(առաքման) ժամկետ՝ 4 օր

Վերապատվիրվող քանակ՝ 200 բազմոց

Որքա՞ն է տվյալ մոդելի համար պաշարների միջին մակարդակը:

Ա) 65 բազմոց

Բ) 130 բազմոց

Գ) 135 բազմոց

Դ) 110 բազմոց

11. Հետևյալներից որն է նկարագրում գնման պատվերը:

Ա) Կազմվել է գնումների բաժնի կողմից, ուղարկվել է մատակարարին պահանջվող նյութերի մասով:

Բ) Կազմվել է պահեստի կողմից, ուղարկվել է գնումների բաժին պահանջվող նյութերի մասով:

Գ) Ստացվել է նյութերի հետ միասին և համեմատվել է ստացված նյութերի հետ:

Դ) Կազմվել է արտադրական բաժնի կողմից, ուղարկվել է պահեստ՝ պահանջվող նյութերի մասով :

12. Ընկերությունը մի արտադրատեսակի համար ունի հետևյալ տեղեկատվությունը.

Մեկ միավորի արտադրության ստանդարտ ժամանակը 15 րոպե
տվյալ ժամանակահատվածում փաստացի արտադրված քանակ 800 միավոր
Փաստացի աշխատած ժամերը 170
Բյուջեով նախատեսված ժամերը 175

Ո՞րքան կազմում տվյալ ժամանակահատվածի աշխատուժի արդյունավետության գործակիցը:

- Ա) 85.0%
- Բ) 117.6%
- Գ) 97.1%
- Դ) 114.3%

13. Կառավարչական հաշվապահի զեկույցը ցույց է տալիս, որ վերջին հաշվետու ժամանակահատվածում հաստատուն արտադրական վերադիր ծախսումները գերկլանվել են: Ո՞ր համադրություն է, որը անպայման կհանգեցնի այս իրավիճակին.

- Ա) արտադրության ծավալը ցածր է պլանավորվածից, իսկ իրական ծախսումները՝ ավելի բարձր բյուջետավորվածից:
- Բ) արտադրության ծավալը բարձր է պլանավորվածից, իսկ իրական ծախսումները՝ ավելի բարձր բյուջետավորվածից
- Գ) արտադրության ծավալը և իրական ծախսումները համապատասխանում են բյուջեին:
- Դ) արտադրության ծավալը բարձր է բյուջեից, իսկ իրական ծախսումները՝ ավելի ցածր:

14. Հաշվետու ժամանակշրջանում A արտադրատեսակի սկզբնական մնացորդը կազմում է 7,700 լիտր, իսկ վերջնականը՝ 4,850 լիտր, սահմանային ծախսումներով հաշվարկված ընկերության շահույթը կազմում է 2,750,100 դրամ :

Ենթադրելով, որ հաստատուն արտադրական վերադիր ծախսումների կլանման դրույքը մեկ լիտրի համար կազմում է 200 դրամ, որքա՞ն շահույթ կստացվի լրիվ ծախսումներով ինքնարժեքի հաշվառման դեպքում:

- Ա) 3,320,100 դրամ
- Բ) 1,780,100 դրամ
- Գ) 2,180,100 դրամ
- Դ) 570,000 դրամ

15. Ռ. Ստեփանյանը իրականացնում է մի արտադրապրոցես, որը արտադրում է Ա1 և Բ2 համատեղ արտադրանքներ: Յուրաքանչյուր արտադրանքին բաշխված համատեղ ծախսումները կազմում են 6500 դրամ մեկ միավորի համար: Ա1 արտադրանքը կարող է վաճառվել բաժանման կետում 6000 դրամով մեկ միավորի համար կամ կարող է հետագայում մշակվել՝ ԱԲ2 արտադրանք ստանալու համար, որը կարող է վաճառվել 8200 դրամով մեկ միավորի համար: Հետագա մշակման լրացուցիչ ծախսումը մեկ միավորի համար կկազմի 1400 դրամ:

ԱԲ2 արտադրանքի վերաբերյալ հետևյալ պնդումներից որն է ճիշտ:

- Ա) Այն պետք է դադարեցվի, քանի որ այն վնաս է կրում բաժանման կետում:
- Բ) Այն պետք է դադարեցվի, քանի որ այն վնաս է կրում հետագա մշակումից հետո:
- Գ) Այն պետք է հետագայում մշակվի, քանի որ ստացվում է լրացուցիչ շահույթ:
- Դ) Այն պետք է հետագայում մշակվի, քանի որ վաճառքի գինը կբարձրանա:

16. Հետևյալներից որը, հավանաբար, չի օգտագործվի բարեգործական հիմնադրամի կողմից կառավարվող հանրակրթական ծրագրեր իրականացնող դպրոցում:

- Ա) Մեկ աշակերտի տարեկան ուսման ինքնարժեքը
- Բ) Դպրոցի շրջանավարտների ԲՈՒՀ-եր ընդունվելու տոկոսը
- Գ) Դպրոցի աշակերտների կողմից միջազգային օլիմպիադաներում հաղթողների քանակը
- Դ) Մեկ աշակերտից ստացված շահույթը

17. Արտադրական գործընթացն ունի 10% նորմատիվային կորուստ, և տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված արտադրանքը կազմում է 5400 կգ: Հումքի սկզբնական պաշարը կազմում է 600 կգ. և կանխատեսվում է, որ այն ժամանակահատվածի ավարտին կանի 20%-ով:

Որքա՞ն է նյութերի օգտագործման բյուջեն:

- Ա) 5580 կգ
- Բ) 6000 կգ
- Գ) 5520 կգ
- Դ) 6120 կգ

18. DRF-ի 20X9 թվականի կանխատեսվող եկամուտը կազմում է ամսական 1,800,000 դրամ: Բոլոր վաճառքները իրականացվում են ապառիկ: Դեբիտորական պարտքերի 50%-ը մարվում են վաճառքի ամսում, 45%-ը՝ հաջորդ ամսում, իսկ 5%-ը դուրս է գրվում որպես անհուսալի երկու ամիս անց:

Որո՞նք են մարտ ամսվա համար նախատեսված կանխիկ հավաքագրումները:

- Ա) 810,000 դրամ

Բ) 900,000 դրամ

Գ) 1,800,000 դրամ

Դ) 1,710,000 դրամ

19. Կարս ընկերությունը պատրաստվում է ներդնել 500 մլն դրամ մեքենաների և այլ կապիտալ սարքավորումների ձեռքբերման նպատակով, որոնք կառաջացնեն արտադրական ծախսումների էական խնայողություններ: Առաջին երեք տարվա այդ խնայողությունների գումարը գնահատվում են հետևյալ կերպ.

Տարի	1	2	3
Խնայողություն՝ մլն դրամ	250	300	222

Որքա՞ն է այս ձեռնարկման զուտ ներկայիս արժեքը (NPV), եթե Ընկերության կապիտալի պահանջվող հատույցը 15% է:

Ա) (90) մլն. դրամ

Բ) 590 մլն. դրամ

Գ) 90 մլն. դրամ

Դ) 272 մլն. դրամ

20. Հետևյալներից որն է լավագույնս նկարագրում «Բյուջետային ճեղք»-ը:

Ա) Բյուջետային նպատակի և տվյալ ժամանակահատվածում ձեռք բերվածի միջև տարբերությունը:

Բ) Բյուջետային չափազանց բարձր սահմանված նպատակի դեմոտիվացնող ազդեցությունը:

Գ) Բյուջետային պլանավորման գործընթացում ծախսերի դիտավորյալ գերազնահատումը և/կամ եկամուտների թերազնահատումը:

Դ) Բյուջետային ծախսերի որոշակի կետի նկատմամբ կուտակված դրական շեղումները:

21. Կառավարչական հաշվապահը արձանագրել է, որ հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է 10,080 ժամ փաստացի աշխատաժամանակ, որի համար վճարվել է՝ \$8,770:

Եթե վարձաչափի շեղումը \$706 Անբարենպաստ է, իսկ արդյունավետության շեղումը՝ \$256 Բարենպաստ, և արտադրվել է 5,000 միավոր, որքա՞ն է մեկ միավորի արտադրության համար պահանջվող ստանդարտ աշխատաժամանակը:

Ա) 1.95 ժամ

Բ) 1.96 ժամ

Գ) 2.07 ժամ

Դ) 2.08 ժամ

22. Ընկերությունը կիրառում է ինքնարժեքի կալկուլյացման լրիվ ծախսումների կլանման համակարգ: Ստանդարտ արտադրական վերադիր ծախսումների դրույքը կազմում է 800 դրամ մեկ ժամվա համար:

Հետևյալ տվյալները վերաբերում են նախորդ ամսվան.

Փաստացի աշխատած ժամեր՝ 6,300

Բյուջեով նախատեսված ժամեր՝ 5,700

Փաստացի արտադրության քանակի ստանդարտ ժամեր՝ 5,400

Որքա՞ն էր հաստատուն արտադրական վերադիր ծախսումների կարողության շեղումը:

Ա) 480 հազ դրամ Անբարենպաստ

Բ) 480 հազ դրամ Բարենպաստ

Գ) 720 հազ դրամ Անբարենպաստ

Դ) 720 հազ դրամ Բարենպաստ

23. Ստորաբաժանումն ունի 2,400,000 դրամ մնացորդային շահույթ և 6,400,000 դրամ զուտ շահույթ՝ մինչև ենթադրյալ տոկոսների հաշվարկը:

Եթե այն օգտագործում է 10% տոկոսադրույք՝ ներդրված կապիտալի վրա ենթադրյալ տոկոսների հաշվարկման համար, որքա՞ն տոկոս (ամբողջ թվերով) է նրա ներդրումների շահութաբերությունը (ROI):

Ա) 4%

Բ) 10%

Գ) 16%

Դ) 27%

Օգտագործեք հետևյալ տեղեկատվությունը հաջորդ երկու հարցի համար

Ընկերության հաշվետվությունների քաղվածքները ունեն հետևյալ պատկերը.

Շահույթի/վնասի հաշվետվություն	Մլն. դրամ
Հասույթ	1,200
Ինքնարժեք	(900)
Համախառն շահույթ	300
Բաշխման ծախսեր	(75)
Վարչական ծախսեր	(45)
Գործառնական շահույթ	180
Տոկոսային ծախսեր	(25)
Շահույթ նախքան հարկում	150
Շահութահարկ	(30)
Տարվա զուտ շահույթ	120

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	Մլն. դրամ	Մլն. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ		600
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	210	
Դեբիտորական պարտքեր	120	
Դրամական միջոցներ	20	
		350
Երկարաժամկետ վարկեր		200
Կրեդիտորական պարտքեր		280

24. Որքա՞ն տոկոս է համախառն շահութաբերությունը:

Ա) 25%

Բ) 10%

Գ) 15%

Դ) 12,5%

25. Որքա՞ն ընթացիկ իրացվելիության գործակիցը:

Ա) 0,8

Բ) 1,25

Գ) 0,5

Դ) 2

Խնդիր 1.

Ադանա Ընկերությունը արտադրական ընկերություն է, որը իր կողմից արտադրվող <<Գամմա>> սարքավորման համար օգտագործում է հիմնական K բաղադրիչը՝ յուրաքանչյուր սարքավորման համար 2 հատ: Այդ բաղադրիչը ներմուծվում է հարևան երկրից: Տրամադրված է ֆինանսական տեղեկատվություն՝ 20X5թ դեկտեմբերի 31-ին, ավարտվող տարվա համար.

Ցուցանիշ	Գումար դրամ
Վաճառքից հասույթ (Revenue)	24,300,000 դրամ
<<Գամմա>> սարքավորման միավորի վաճառքի գին	54,000 դրամ
Համախառն շահութաբերություն	30%
Դերիտորական պարտքերի հավաքման տևողություն	15 օր
Ընթացիկ իրացվելիության գործակից	2:1
K բաղադրիչի ներմուծման տրանսպորտային ծախս յուրաքանչյուր խմբաքանակի համար	90,000 դրամ
K բաղադրիչի յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման մաքսատուրք	20,000 դրամ
K բաղադրիչի ներմուծման խմբաքանակի ԱԱՀ	20%
K բաղադրիչի պահեստում պահպանման ամսական ծախս	1500 դրամ

ա) Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պաշարների տարեվերջի մնացորդի արժեքում ներառված է միայն K բաղադրիչի համար պահվող բուֆերային մնացորդը 150 հատ, որի ընդհանուր արժեքը կազմում է 1,800,000 դրամ: Ընթացիկ ակտիվները բաղկացած են պաշարներից, դերիտորական պարտքերից և 561,400 դրամ կանխիկ միջոցներից, կրեդիտորական պարտքերը կապված են միայն հույսի գնումների հետ առաջացած պարտքերից:

Հաշվարկների պարզության համար ենթադրել, որ K բաղադրիչի ինքնարժեքում չի ներառվում պաշարի մինչև պահեստ հասցնելու հետ կապված ծախսումները, իսկ տարին ունի 360 օր:

բ) Ներկայումս Ադանա Ընկերությունը K բաղադրիչը տարվա ընթացքում պատվիրում է ամսական հավասար խմբաքանակներով, սակայն մտադրվում է պատվիրել կիսամյակը մեկ, պատվերների բաժնի աշխատանքի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար: K բաղադրիչների սպառումը տեղի է ունենում տարվա ընթացքում հավասարաչափ:

գ) Գամմա սարքավորման արտադրության մեջ, բացի K բաղադրիչից օգտագործվում է այլ՝ N բաղադրիչը՝ յուրաքանչյուր արտադրանքի միավորում մեկ հատ, որը գնվում և օգտագործվում են արտադրությանը զուգահեռ և պաշարների մնացորդում առկա չէ: Այդ բաղադրիչի արժեքը կազմում է K-ի արժեքի 25%-ը: 20X7-ին Ընկերության տարեկան հասույթը աճել է, որի արդյունքում օգտագործվող Գամմա արտադրատեսակի մեջ օգտագործվող բաղադրիչների խմբի Լասպեյրեսի քանակային ինդեքսը 20X7 թվականին 2026-ի համեմատ կազմել է 110%, այն պարագայում, որ N բաղադրիչի ձեռքբերման գինը աճել են 10%-ով, իսկ K-ինը մնացել է անփոփոխ:

Պահանջվում է.

(ա) Օգտագործելով 2005 թ. ֆինանսական տեղեկատվությունը՝ հաշվարկել՝

(i) Տարևերջի դեբիտորական պարտքերի գումարը **(1 միավոր)**

(ii) Տարևերջի կրեդիտորական պարտքերի գումարը **(2 միավոր)**

(iii) Արագ իրացվելիության գործակիցը, եթե տարեվերջի վերը նշված ֆինանսական տեղեկատվության ամփոփումից հետո դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվեն կրեդիտորական պարտքերի մարմանը **(3 միավոր)**

(բ) Հաշվարկների միջոցով, խորհուրդ տվեք Ադանա Ընկերության ղեկավարությանը, արդյոք այն պետք է իրականացնի իր մտադրությունը պատվերի քանակի վերաբերյալ եթե բաժնի աշխատանքի ծանրաբեռնվածության թեթևացումը ծախսերի խնայողություն չի առաջացնում: **(5 միավոր)**

գ)

(i) Քանի հատ K բաղադրիչ է օգտագործվել 20X7 թվականին **(3 միավոր)**

(ii) 20X7 թվականի համար որքան կկազմեր պատվիրման այն քանակը, որը նվազագույնի կհասցներ պաշարների պահպանման և պատվիրման ծախսերի հանրագումարը: **(1 միավոր)**

(Ընդամենը 15 միավոր)

Խնդիր 2.

Լրատու ընկերությունը բազմապրոֆիլ բիզնես է, որի մի բաժինը մատուցում է սուրհանդակային ծառայություններ՝ օգտագործելով փոքր ֆուրգոնների պարկ:

(ա) Ստորև ներկայացված է բաժնի ղեկավարի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվությունը՝ 20X4թ հունիսի 30-ին, ավարտվող տարվա համար:

Ցուցանիշ	Գումար հազ. դրամ
Հասույթ (Revenue)	600,000
Համախառն շահույթ (Gross profit)	144,000
Գործառնական շահույթ (Operating profit)	57,600
Վարկ (տարեկան 8%)	72,000
Գործարկված կապիտալ (Capital employed)	192,000

(բ) Սուրհանդակային բաժնի ղեկավարն այս տարի թոշակի է անցնում, և նրա բոնուսը հիմնված է բաժնի հաշվարկված ԳԿԾ (գործարկված կապիտալի շահութաբերության) վրա: Իր բոնուսի անձին նպաստելու համար նա մտածում է արհեստականորեն բարձրացնել ԳԿԾ հետևյալ գործողություններից մի քանիսով.

1. Հետաձգել ֆուրգոնների վերանորոգման աշխատանքները:
2. Թերազնահատել պահեստում առկա վառելիքի վերջնական մնացորդը:
3. Ներառել եկամուտը դեռևս չավարտված նոր պայմանագրից:
4. Գերազնահատել դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստը:

(գ) Ընկերության ղեկավարությունը ցանկանում է ներդնել լրացուցիչ գործառնական ֆինանսական ցուցանիշներ՝ սուբհանդակային ծառայության բաժնի աշխատանքային արդյունավետության գնահատման համար:

Ա) Մեկ տոննա*կիլոմետրի ծախս

Բ) Վարորդի մեկ ժամվա աշխատանքի վարձատրություն

Գ) Ֆուրգոնների պարապուրդի տոկոսը

Դ) Վարորդների պարապուրդի տոկոսը

(դ) Ընկերությունը որոշել է վաճառել իր հին ավտոմեքենաների մի մասը 10 մլն դրամով անմիջապես վճարելու պայմանով, որը բավական ողջամիտ գին է: Մի գնորդ առաջարկել է վճարել երկու միլիոն ավել, սակայն գործարքի այդ գումարի 25 տոկոսը կվճարի անմիջապես, իսկ մնացած գումարը երեք տարվա մեջ հավասար մասերով յուրաքանչյուր տարվա վերջ: Մեկ այլ գնորդ առաջարկել է 11 մլն դրամ վճարել մեկ տարի հետո:

Պահանջվում է.

(ա) Օգտագործելով 2004 թ.ֆինանսական տեղեկատվությունը՝ հաշվարկել՝ (երկու տասնորդական նիշի ճշտությամբ)

(i) Տոկոսավճարի ծածկույթ (Interest cover ratio) **(1.5 միավոր)**

(ii) Գործարկված կապիտալի շահույթաբերություն(ROCE) **(1.5 միավոր)**

(iii) Ֆինանսական լծակը, ըստ պարտք/սեփական կապիտալ բանաձևի **(2 միավոր)**

(բ) Բացատրեք վերը թվարկվածներից որ գործողությունները և ինչպես կնպաստեն սուբհանդակային բաժնի ղեկավարի մտադրության իրականացմանը: **(3 միավոր)**

(գ) Նշված որ գործառնական չափանիշը կլինե՞ր առավել նպատակահարմար տվյալ բաժնի համար(պատասխանը հիմնավորեք): **(2 միավոր)**

(դ) Եթե Ընկերության կապիտալի արժեքը 15%-է, գնորդներից որի առաջարկն է ավելի ձեռնտու Ընկերությանը և արդյոք այն պետք է ընդունի այդ առաջարկներից մեկը թե շարունակի փնտրել գնորդ, որը կկնքի գործարքը սկզբնական պլանավորված պայմաններով: **(6միավոր)**

(ե) Որքա՞ն է ներդրման արդյունքային(արդյունավետ,փաստացի) տարեկան տոկոսադրույքը (effective annual rate), եթե յուրաքանչյուր եռամսյակ կապիտալացվող(կուտակվող) տոկոսադրույքը կազմում է 3% (տոկոսներով, ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ): **(2 միավոր)**

(Ընդամենը 18 միավոր)

Խնդիր 3.

Նկարագրող ՍՊԸ-ն արտադրում է նկարի փայտե շրջանակներ: Ընկերության տեղեկատվական համակարգն տրամադրում է գործառնական հաշվետվություն, և հաշվարկված շեղումների հիման վրա դեկլարները գնահատվում են ու ստանում հավելյալ վարձատրություն:

Մեկ շրջանակի նյութածախսի նորմատիվային ինքնարժեքի քարտն ունի հետևյալ տեսքը

Ստանդարտ նյութական արժեք (մեկ շրջանակի համար՝ 800 դրամ)

Նյութ	Քանակ	Գին	Արժեք /դրամ/
Փայտ	0.5 կգ	1000 դրամ	500
Ապակի	0.25 կգ	1200 դրամ	300
Ընդամենը նյութածախսումի նորմատիվային ինքնարժեք			800

Հուլիս ամսվա ծախսումի փաստացի տվյալներն են (300 շրջանակ արտադրվել է)

Նյութ	Գնված քանակ	Փաստացի արժեք դրամ
Փայտ	170 կգ	204,000
Ապակի	70 կգ	86,000

(ա) Օգտագործելով վերը նշված տեղեկատվությունը հաշվարկե՛ք՝

- (i) Նյութի գնի շեղումը **(2 միավոր)**
(ii) Նյութի օգտագործման շեղումը **(2 միավոր)**

(բ) Կառավարչական հաշվապահը հայտնել է, որ փայտի մնացորդը ժամանակաշրջանի վերջում սկզբի նկատմամբ չի փոխվել, սակայն ապակու մնացորդը աճել է 15 կգ-ով: Այժմ քննարկվում է թե գնումների մենեջերը, արտադրության թե վաճառքների մենեջերը պետք է բացատրի այդ փաստը և հաշվի առնի իր աշխատանքի ընթացքում: Պատասխանելիս անդրադարձ կատարեք յուրաքանչյուրի պատասխանատվության շրջանակներին: **(2 միավոր)**

(գ) Հետյալ պնդումները ճիշտ են թե սխալ (սխալի դեպքում՝ սխալը մատնանշել)

- (i) Ճկուն բյուջեով բոլոր արտադրական վերադիր ծախսումները վերահաշվարկվում են իրացման տարբեր մակարդակներին համապատասխան **(1,5 միավոր)**
(ii) Երկարաժամկետ հատվածում բոլոր հաստատուն ծախսումներից կարելի է խուսափել կամ դրանք կրճատել: **(1,5 միավոր)**

Ընդամենը (9 միավոր)

Խնդիր 4.

Տպագրատուն ՄՊԸ-ն իրականացնում է դասագրքերի տպագրություն և վաճառք: Առկա են հետևյալ տվյալները.

Դասընթաց	Փոփոխական ինքնարժեք /դրամ/	Վաճառքի գին /դրամ/
Մաթեմատիկա	2,000	4,000
Զինգի	1,500	2,000
Ֆիզիկա	2,500	4,000

Ինքնարժեքի մեջ ներառված չեն բաշխման ենթակա ընդհանուր ծախսումները, որոնք մեկ ամսվա համար կազմում են 240,000 դրամ և որոնք բաշխվում են իրացման հարաբերական արժեքով: Գրքերից յուրաքանչյուր տեսակի վաճառքը խթանում է մյուս տեսակների վաճառքը, ինչի արդյունքում վաճառված գրքերի քանակային համամասնության մեջ, որևէ տեսակ չպետք է գերազանցի ընդհանուր վաճառված միավորների 50%-ը և չպետք է պակաս լինի 20%-ից:

Պահանջվում է

ա) հաշվարկել նվազագույնը քանի միավոր դասագիրք պետք է տպագրի և վաճառի Ընկերությունը որպեսզի ամսական ապահովի 70,000 դրամ շահույթ **(4,5 միավոր)**

բ) Որքան կկազմի այդ ամսվա հասույթը գրքերի վաճառքից **(1 միավոր)**

գ) Որքան կկազմի շահույթը ֆիզիկա դասագրքի արտադրությունից տվյալ ամսում: **(2,5 միավոր)**

Ընդամենը (8 միավոր)